

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Պիշֆոն :

ԸՆՑԵԱԼ գարուն երևելի գրական ներէն ոմանք՝ մեծին Սուրբաբաբի մահուանէն ետքը, անոր ատենի պայծառութիւնը յիշեցրնել տուին, և անոր համարումը աւելցուցին իրենց հանձարովը: Ըստնց մէջ առաջին տեղին ունինաւ Պիշֆոնը, որուն անուան պէս իրաւամբ հռչակեալ և միանգամայն հասարակաց ծանօթ ուրիշ մըն ալ չկայ, թէ իրեն ճարտասանութեանը և թէ մեծ հանձարին համար, և մանաւանդ Բնական պատմութեան մէջ ըրած փոփոխութեամբը:

Ընաւ Սուրբաբաբի Գեորգ Էրբեր Պիշֆոն կոմսը 1707ին Գաղղիոյ Սոնպար քաղաքը. իր հայրը Բենիամին Էրբեր որ Տիփոնի փարլամենթին խորհրդականն էր՝ բաւական ունեւոր ըլլալով՝ լաւ դաստիարակութիւն տուաւ

իր որդւոցը այնպիսի ապականեալ ժամանակուան մէջ: Պիշֆոն ալ եռանդեալօք մը կը սորվէր իր ուսմունքները, որով երբոր լմնցուց իր ուսման ընթացքը, իրեն պէս երիտասարդ բայց ազնուական անձի մը հետ բարեկամացաւ որ կ'ըսուէր դուքս Վինկսթրն: Պտտեցաւ ասոր հետ Խտայիա և Լոնդոն, և աս ճամբորդութեանս մէջ անգղլարէնէ մէկ քանի գիրք թարգմանեց, որով սկսաւ ցուցնել իրեն ինչ գրիչ ունենալը: Ըստ գիրքերուն յաջողութեանէն խրախոյս առնելով, բողոքովն ալ զինքը ուսմանց և գիտութեանց տուաւ, և կը զբաղէր միանգամայն բնագիտական և գիւղական տնտեսութեան փորձերու հետ, և ծանօթացաւ ամենուն՝ խելացի յիշատակագիրներ հանելով:

Ըսկէ վերջը զիպուածով մը իր նպա-

տակին ու մտքին յօժարու թեանցը յարձար ասպարէզ մը բացուեցաւ . վասն զի թագաւորական պարտէզին Տիւֆէի ա նունով տեսուչը՝ որ մասնաւոր սէր մը ու նէր իրեն վրայ , մեռնելու մօտ օրերը վինքը յաջորդը ընտրեց , որն որ յաջուղեցաւ , և Պիւֆֆոն որ ան ատենը հազիր 30 տարեկան էր մտաւ 1739ին նոյն պաշտօնին մէջ . նոյն տարուան մէջ ընտրուել էր նոյնպէս գիտութեանց ճեմարանին կաճաւորդ : ( ) գտակար առիթ մը սեպեց աս սլաշտօնս , և ուզելով բնութեան նկարագրութիւնը ճիշդ Կծագրել , գիշեր ցորեկ Բնական պատմութեան կը պարապէր . բայց չվստահանալով իր ուժին՝ շատ հանձարեղ գրականներ ալ իրեն օգնական առաւ , որոնց մէջ էր նաև անուանի Տիւպանթոնը , որուն հետ շարագրեց իր առջի գործքերը ու հետզհետէ հրատարակեց աս գրքերը , Երկրի Գեոմետրիկ և Կենդանեաց Բնութեան , Մարդոս պարտմութեան , և նաև Չորհրդանեաց վրայօք Կրած հատորները . և անխանջ աշխատասիրութեամբ տարիներէն ետքը հրատարակեց Թուշնոյ պարտմութեան , նոյնպէս Հանգաց , և Գարտ Բնութեան ըսուած սիրուն գիրքը : Գրեթէ աս գիտութեանս մէջ մաշեցուց իր կեանքը Պիւֆֆոն յիսուն տարի միակերպ : Բոլոր մեծերը զարմանալով մը կը նայէին իրեն իբրև մեկնիչ մը բնութեան , և կարգէ գուրս սէր ունէին վրան . իսկ գիտունները աննախանձ աչքով մը նայելով՝ իբրև իմաստուն բնասլատում մը կը ճանչնային զինքը . բաց ասոնցմէ գաղղիական Բիւպեմիայն իրեն անդամ ընտրեց 1753ին . Եւրոպիկոս ժեալ իրեն սէրն ու համարումը ցցուց՝ Պիւֆֆոնի կամութեան սլատիւր տպով . և մեռնելէն առաջ տեսաւ Պիւֆֆոնի արձանը կանգնուած բնական պատմութեան թանգարանին նախագաւիթը՝ լատիներէն աս վերտառութեամբս .

Majestati natnrae par ingenium .

Զուգական հանձար մեծվայելութե բնութի :

Երկրագիտութեան Պիւֆֆոն այսպիսի

պատիւներով ու փառօք՝ և ամենէն մեծարեալ ու գովելու մեռաւ 1788ին 81 տարեկան :

Պիւֆֆոնի Բնական պատմութիւնը չորքոտանեաց ու թուշնոյ վրայ կը ճանչուի . իսկ մնացած մասանցը վրայ գրելու չհասաւ . իրեն վաստակակիցներն էին աս մեծ գործքին՝ Չորհրդանեաց վրայ Տիւպանթոն՝ որ անդամազննական մասը առեր էր գրելու . իսկ Թուշնոյ՝ Կենոյ տը Երկրագիտութեան ու Կենսաբանութեան :

Բնագիտութեան ամենէն ալ կը վկայեն թէ Պիւֆֆոն եղաւ առջինը որ Գաղղիոյ մէջ կարգաւորեալ ոճով գրուած Բնական պատմութիւն մտցրնէ և աս ուսման ախորժակը : Իրեն արգիւնքն է նաև որ իրմով աս ուսմունքը շատ առաջ գնաց , եթէ անթիւ նոր գիւտերով , եթէ նոր գիտողութիւններով , և թէ իսկ մը ցիրուցան նիւթերը հաւաքելով՝ աս ուսմանս մեծ ծառայութիւնը րաւ : Բայց Պիւֆֆոն ստգտանելի է աս կողմանէ որ կենդանեաց ուսումնական դասաւորութիւնը մերժեց , որ առանց ասոր ոչ կարգ և ոչ ալ պարզութիւն կ'ունենայ գրուածք մը , և մանաւանդ լաւ սպասոյցներ չունենալով ձեռքը՝ շատ անգամ մտացածին ենթադրութիւններ կ'ընէ անոր վրայօք խօսելու ատեն : Ետաց ծուռ նախապաշարմամբ մը՝ կենդանեաց բնաւորութեան բնական ազգումը՝ ուզեց անոնց բարոյական յատկութեանցը մէջ գտնել . նմանապէս ուղածին պէս անոնց կարգէ դուրս մտաւորական կարողութիւն մը ու տեսակ տեսակ զգացողութիւններ տալ , որ բնութիւնը ժխտեր է : Եւստի ինքը իբրև առաջնորդ նոյն ուսման չկրնար առնուիլ , բայց ասիկայ իրեն անարգանք մը չէ . վասն զի իրեն գրքերը բոլոր ուսումնականաց առջին արժանաւոր յարգը ունին , և միշտ Գաղղիոյ պարծանքներէն մէկն է : Իսկ իրեն ճարտասանութեը , վառվառն մտայն ու երևակայութեանը և նուրբ ու գողտր նկարագրութիւններուն օրինակ մը տալու համար , հոս տեղս թարգմանած դնենք իրեն Յարտմարտի գրքին մէկ հատուածը ,

որուն մէջ առաջին մարդը իր ստեղծագործութենէն ետեւ զգացած առջի վիճակը կը ստորագրէ :

“Տակաւին՝ ի յուշ ինձ դառնայ վայրկեանն հրձուալից և պակուցանողական յորում ծանեայ զառաջինն զիմն սեպհական էութիւն . ոչ գիտէի թէ զինչ իցեմ, ուր իցեմ և ուստի գայցեմ : Ի բանսլ աչացս զեղան յիս զգայութիւնք, լոյս և կամար երկնից երկիր դալարի և ջուրք բիւրեղեայք գրաւէին զանձն իմ և շնչէին յիս հոգի և անձառ բերկրանս ազգէին յիս : Կարծէի զառաջինն եթէ էակքս համօրէն յիս ինքն իցեն, և մասն անձինս համարէի զնոսա : Տակաւ հաստատէի յինքնաստեղծ յայտ կարծիս, և ահա դարձուցի զաչս իմ յաստղն լուսապայծառ . նշոյլք նորա շլացուցին զաչս իմ, և յակամայս փակեցի զարտեանունս իմ, զի ցաւեաց ականողիս : Յառնուլ զիս սատեւրաց, համարեցայ եթէ ահա կորուսի զիմն էութիւն :

Եւ մինչդեռ լքեալ և ընդարմացեալ խորհէի ընդ յեղափոխութիւն անձինս, և ահա ձայն յունկն իմ՝ հնչեաց, աւաչք թռչնոց և սօսաւիւն հողմոց դաշնակաւորս իմն յօրինէին նուագս, որոյ քաղցրութիւն ազգէր ՚ի մասունս հոգւոյս . ընդ երկար լեալ ունկնդիր համոզակեր լինէի անձին, եթէ ես ինքն իցեմայն դաշնակաւորութիւն :

Եւ յն ինչ մտախորհ հիացեալ կայի ընդ նորոգատուրս այս կենդանութի, և ՚ի մոռացօնս ինձ դառնայր լոյս՝ որ կանխածանօթ մասն էր էութեանս, և ահա բացան անդրէն աչք իմ . ով քանի խնդութիւն էր ինձ ՚ի գտանել անդ միւսանգամ զնշուլագեղ զարարածս . և խինդք սրտիս անցին զանցին քան որ ՚ի նախկին զգայութեանս, և դադարեցան առ վայր մի զբօսանք ձայնից :

Երջէի զաչս իմ ՚ի տեսիլ բիւրուց էակաց, և ՚ի միտ առի վաղվաղակի եթէ հնար էր ինձ կորուսանել և գտանել զնոսին, և թէ էր յիս զօրութիւն ըստ կամի եղծանելոյ և միւսանգամ

վերաստեղծելոյ զայս գեղեցիկ մասն իմոյ էութեանս . և թէպէտ թուէր ինձ անբաւ ՚ի մեծութեան և վասն բիւրապատիկ փոփոխմանցն և վասն երկնեւրանգ գունոց, բայց համարէի համբարեալ զնոսա ՚ի մասն ուրեք անձինս :

Տակաւ անայլայլակ աչօք նկատէի և անվրդով լէի, և ահա սիւք թեթեւ ընթաց և հողմաբեր էած ինձ բուրմունս անուշից, որ նուաղեալ թուլացուցին զսիրտ իմ և ազգեցին յիս սէր և գրգանս առ անձն իմ :

Եւ փեալ ՚ի համայն զգայութեանցս, և յորդորեալ ՚ի հաճոյից չքնաղ և վսեմաբերձ էութեանս՝ յանկարծ ՚ի վեր վաղեցի և թուէի վարեալ յանձանօթ իմն զօրութենէ : Եւ այլ մի յառաջեալ, անդէն զկայ աւեալ արձանացայ, ՚ի նորաքանչ դրից մարմնոյս հարեալ յապշութիւն . կարծէի փախչել յինէն գոյութեանս, և տեղափոխութիւնս իմ վրդովեաց զէս համօրէն, կարծէի եթէ ամենայն ինչ խառն ՚ի խուռն կուտիցի :

Եւ քարձեալ զձեռս իմ ՚ի գլուխս շոշափէի զձակատն իմ և զաչս, և ընդ բովանդակ մարմինս իմ . և համարեցայ յայնժամ թէ ձեռն իմ իցէ առաջին գործարան էութեանս . զգայութիւնք որ նովաւ՝ ճչգրտագոյնք էին և անթերիք, որով և վայելքն գերազանցք քան զհաճոյս՝ զորս ազգէին յիս լոյս և ձայն, մինչ զի կամակար մատուցի զանձին առաջնորդութի՝ յայս հաստատուն մասն իմոյ էութեանս, և գիտացի եթէ տակաւ ընդարձակէին խորհուրդք մտացս և ճշմարտեալ տարրանային :

Որ ինչ ձեռամբ շոշափէի ՚ի մարմնի իմում՝ զգայութիւնք ընդ զգայութեան ձեռինս փոխանակէին, և յոր հոգի կրկին երևոյթս մտաց ազգէր ՚ի հոգիս :

Եւ ազվաղակի ՚ի միտ առի անյասարղ եթէ զօրութիւն զգայութեան ծաւալեալ էր ընդ անձն իմ բովանդակ, և ծանեայ զսահման իմոյ էութեանս զոր յառաջն անպարագիր համարէի :

Եւ ինքն զաչս իմ դարձուցեալ մեծատարր զանձն իմ վարկանէի, մինչ զի

այլ ամենայն արարածք զորս նկատէի՝  
Թուէին առ նուազ կէտք մանունք լու-  
սանշոյք :

Հարուստ ժամն հիացեալ պշուի  
ընդ անձն իմ, և ակնկաւոյց լեալ ընդ  
ձեռն իմ զշարժուածս նորին զննէի . և  
անհեղեղս իմաստասիրէի զամենայնէ .  
համարէի եթէ շարժուած ձեռացս է-  
ութիւն իմն էր փախտական, և նման  
օրինակ դիպաց անանջրպետ յաջորդու-  
թիւն . և այն ինչ մերձեցուցեալ յաչս  
իմ զձեռս, և ահա մեծացաւ նա քան  
զմարմինս իմ բովանդակ, և Թագու-  
ցեալ ծածկեաց յաչացս զյոյրվագոյնս  
յարարածոց :

Ս արանեալ սկսայ 'ի միտս իմ մի  
գուցէ կեղակարծ ինչ իցէ որ յաչս ըզ-  
գայութիւն . զի տեսեալ միանգամ ճըշ  
մարտապէս եթէ ձեռն իմ մասն ինչ  
փոքրիկ էր մարմնոյս, չկարէի 'ի միտ  
առնուլ եթէ զիւրդ մարթ էր նմին այն-  
չափ մեծանալ, մինչև անհեղեղ Թուել  
ինձ մեծութեանն : Ս ասնորոյ եղի 'ի  
միտս իմ շօշափականին և եթ լինել ա-  
պաստան՝ որով ցարդ չէր իմ պատրեալ,  
և անձնապահ լինել յայլ ամենայն ըզ-  
գայութեանց և յեութեանց :

( ) Գտամատոյց եղև ինձ խորհուրդս .  
զի այն ինչ ոտս առեալ ընթանայի  
բարձրագլուխ և երկնադէտ, ընդհա-  
րայ մեղմով ընդ ծառ մի արմաւենի .  
ահաբեկ ընկրկեալ ձգեցի զձեռն իմ  
յէակն օտարոտի, զոր և այնպէս համա-  
րեցայ զի զգայութիւն ընդ զգայութե-  
ոչ փոխանակեաց . 'ի բաց փախեայ 'ի  
նմանէ պակուցմամբ, և զայն առաջին  
նուագ 'ի միտ առի՝ եթէ գոն այլ էակբ  
արտաքոյ քան զիս :

Ինդ գիւտս այս նորահրաշ առաւել  
վրդովեցայ, քան ընդ այլն ամենայն,  
և յոչ կամաց հաստատեցայ յայս կար-  
ծիս, և մտախորհ լեալ ընդ դէպս ան-  
ակնկալ, հաստատեցի եթէ և զար-  
տաքնոց զնոյն օրինակ զփորձ առնուլ ար-  
ժան է սրպէս զմարմնոյս, և Թէ չէր  
ինձ մարթ այլով իւրք զգոյութիւն նո-  
ցին հաւաստել, բայց շօշափմամբ ձե-  
ռինս : Ս ասնորոյ կամէի ձեռնհաս հպիւ

ամենայի, կամէի ըմբռնել զարեգակն,  
տարածեցի զբազուկս իմ առ 'ի ընդգր-  
կել զծագս տիեզերաց . բայց ունայնու-  
թեան օդոց գիրկս արկանէի :

Իւրաքանչիւր փորձ հանդիսից 'ի  
զարմացումն գրաւէր զիս, զի զամենայն  
արարածս միապէս հպաւորս ինձ համա-  
րէի, մինչև յետ բազում դիպաց՝ ուսայ  
աչօքս զձեռս իմ ուղղել . այլ քանզի աչ-  
լազանք էին տպաւորութիւնք ձեռաց,  
քան զոր յաչացս ընդունէի, վասն որոյ  
և ոչ զուգաձայնք էին զգայութիւնքս  
ընդ միմեանս, որով և ոչ անթերի՝ մը-  
տացս դատաստան . որով և բովանդակ  
իմն էութիւն ոչ այլ ինչ Թուէր ինձ՝  
բայց գոյութիւն Թերակատար :

Խորամուխ լեալ յանձն իմ, որ ինչ  
էիս, և որ ինչ լինելոցն էի, խորհուրդքս  
այսոքիկ տարադէմք՝ լքեալ կորացուցին  
զանձն իմ . և որչափ 'ի նոսին մտախորհ  
լինէի, այնչափ ևս վարանք յեղակարծ  
ընդառաջ ինձ ելանէին : Ս արտասեալ  
'ի վարանմանցս և վաստակեալ 'ի յուզ  
մանց հոգւոյս, կթոտեցան ծունգք իմ  
և ընկողմնեալ հանգեայ : Ս ամ հան-  
գատեանն նորոգատուր զօրութիւն 'ի  
զգայարանս իմ յաւել :

Իսպէս բազմեալ կայի ընդ ստուե-  
րաւ սաղարթագեղ ինչ ծառոյ յորմէ  
պտուղք բոսորագեղք ողկուզօրէն կա-  
խէին առձեռնամերձ հպաւոր ձեռինս :  
Ս մերձենալ առ նոսա մեղմագոյնս՝ Թօ-  
թափեալ անկան յոստոց ծառոյն, որ-  
պէս Թօթափեցի Թուզ վաղահասուկ :

Ի ձեռս առի զմին 'ի պտղոցս . և  
յաղթական զիս ինքն համարէի, և  
պանծայի ընդ զօրութիւն իմ, իբրու  
զի 'ի ձեռին կալեալ ունէի զէակ մի բո-  
վանդակ . այլ ծանրութիւն նորին Թէ և  
դիւրատար Թուէր ինձ ընդգիմադրու-  
թիւն իմն հոգեկան, և բերկրէի յան-  
ձրն իմ՝ տեսեալ զիս յաղթական նմին :  
Ս երձեցուցի զնա յաչս իմ, և զննէի  
զձև նորին և զերանդս . և 'ի բուրել  
անուշից և ևս մօտագոյնս կալայ զայն  
առ իս մերձ առ շրթունս իմ, և հոտո-  
տէի մեծաշունչ զանուշահոտն քաղցրու-  
թիւն, և վայելէի 'ի հեշտարար տարփս

անդայ . լի էր անձն իմ բովանդակ 'ի սիւքս անուշարարս : Բացաւ բերան իմ 'ի կլանել զօրն կենդանարար , բացաւ միւսանգամ 'ի տուր և առս շնչոյ . և անդէն իմացայ եթէ էր 'ի ներքս յիս զօրութիւն հոտոտելեաց նուրբ և գողտրիկ քան զառաջինն . . . ճաշակեցի :

Ս'վ քմապարար ճաշակացն , ուլ նորաքանչ զգայութեանն . ցայն վայր հաճոյք և եթէ էին վայելքս , իսկ ճաշակ աղդեաց ինձ հեշտալիս : Ս'այելք ներքին ծնան յիս միտս՝ սեպհականելոյ յիս ինքն զարարածս . թուէր ինձ եթէ յեութիւնս իմ փոխարկեցաւ պողոյն գոյութիւն , և թէ մարթ էր ինձ կերպարանափոխ առնել զէակս համօրէն :

Բնձնապանծ իշխանականն խորհրդովք , և յորդորեալ 'ի հեշտալի ըզգայութեանցն , միանգամ և միւսանգամ ձգեցի զձեռն իմ 'ի պտուղս , զի ոչ պարտասէր բազուկք իմ արբանեկել հաճոյիցս . այլ տակաւ թմբիր ախորժական ընդ բովանդակ զգայութիւնս իմ ծաւալէր , և ծանրաբեռնեալ մասանց մարմնոյս նհանջեաց զեռանդն հոգւոյս :

Համարէի եթէ աղօտացեալ խորհրդոց մտացս՝ յանգործութեան կալեալ զիս ունէին , և բթացեալ զգայութեանց ստուերածս զարարածովք արկանէին , և անտիպս և անկերպարանս առաջի իմ նկարէին զնոսս : Եւայնմ ժամանակի փակեցան աչք իմ անզօրք 'ի տեսանել , և ջլատեալ զօրութիւն մկանանցս՝ ոչ ևս կարէին 'ի վեր ունել զգլուխն իմ , վասն որոյ և սա խոնարհեալ յեցաւ 'ի դալարիս , և անդէն ամենայն ինչ եղծաւ և անհետ ծածկեցաւ : Բադարեցաւ միջնաշաւիղ խորհրդոցս , և կորեաւ յինէն գիտակցութիւն էութեանս : Եւանրարութուն էր քունս , այլ չգիտեմ թէ և յերկար , տակաւին չունելով ծանօթս զժամանակէ , վասն որոյ և 'ի չափել զնոյն անբաւական : Օարթեայ և թուէր ինձ՝ ահա միւսանգամ ծնանիցիմ , և համարէի եթէ դադարեալ իցէ առ վայր մի իմն գոյութիւն : Ըքութիւնս իմ այս զոր յանձին զգացի , աղդեաց

յիս երկիւղ , և ծանոյց ինձ եթէ չէ ինձ մարթ կեալ յաւէժաբար :

Բայն ահա նորօրինակ տագնապ , զի ոչ գիտէի եթէ կորուսի արդեօք 'ի քուն հանգստեան մասն ինչ յեութիւնս . Եւ համար զգգայարանս իմ կոչեցի , և կամէի տեսանել և ճանաչել զանձն իմ : Եւայնմ վայրի հասեալ արփենւոյն 'ի ծայր ասպարիզին շիջոց զճահ իւր լուսաբորբոք . չմարթացայ անդէն 'ի միտ առնուլ եթէ ահա կորուսանեմ զտեսութիւն . զի գիտակ անխուսափելի էութեանս՝ ոչ երկնչէի կորուսանել ըզգոյութիւն իմ , և խաւար որ ծածկէրն զիս՝ ընդ վայր 'ի յուշ իմ ածէր զերևոյթս առաջին քնոյս , , :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Եւրոպոյի ձարտարութեան և վաճառականութեան վրայ գիտելիք :

ԵՆՏՐՈՂԱՅՆ բոլորը մէկէն առնելով կրնայ ըսուիլ թէ ձարտարութեան աշխարհ մըն է , 'ի բաց առեալ քանի մը մանր կողմերը . որովհետև կը տեսնենք որ աշխարհք մը կամ երկիր մը չկայ որ իրեն յատուկ մէկ ձեռագործ մը կամ արուեստ մը չունենայ և քիչ շատ նոյն բանին մէջ յաջողութիւն չցուցնէ : Ստոյգ գիտութիւններն ալ որ օրուան վրայ արուեստներու յարմարցնելով մանաւանդ աս վերջի տարիներս , ձարտարութեան շատ մեծ ձեռնտութիւն եղաւ . շարժաբանութիւնը կամ մեքենական գիտութիւնը մարդու տկար ուժը յանհունս զօրացուց՝ ջրաշարժ օդաշարժ և մանաւանդ շոգէշարժ մեքենայից ձեռքով որոնց շնչաւոր արարածոց ուժը անկարելի էր որ հասներ . բնալուծութիւնը շատ դիւրին կերպեր ցցուց մարմիններ լուծելու ու բազազրելու դիւրին ու անվնաս կերպով , որուն մէկ հատիկ օրինակ կրնանք սեպել հին կամ անդիկով ու նոր կամ կալվանեան ոսկէ-